ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20 սեպտեմբերի 2023 թվական ք. Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի՝ Մայա Ալեքսանյանի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության՝ 2022 թվականի նոյեմբերի 17-ին կայացած՝ ՀՀ ԱՆ նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի որակավորման ստուգման արդյունքում ՀՀ արդարադատության նախարարի կողմից ստեղծված հանձնաժողովի կայացրած՝ 2022 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 3 արձանագրությունը հայցվորի մասով վերացնելու, որպես հետևանք՝ ՀՀ արդարադատության նախարարության գլխավոր քարտուղարի՝ 2023 թվականի փետրվարի 15-ի թիվ /17.0.1/7898-2023 գրությունը վերացնելու պահանջների մասին, թիվ ՎԴ/6460/05/23 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2023 թվականի սեպտեմբերի 8-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Մայա Ալեքսանյանը 2023 թվականի օգոստոսի 18-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության՝ պահանջելով հայցվորի մասով վերացնել 2022 թվականի նոյեմբերի 17-

ին կայացած՝ ՀՀ ԱՆ նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի որակավորման ստուգման արդյունքում ՀՀ արդարադատության նախարարի կողմից ստեղծված հանձնաժողովի կայացրած՝ 2022 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 3 արձանագրությունը, որպես հետևանք՝ վերացնել ՀՀ արդարադատության նախարարության գլխավոր քարտուղարի՝ 2023 թվականի փետրվարի 15-ի թիվ /17.0.1/7898-2023 գրությունը:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2023 թվականի օգոստոսի 24-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2023 թվականի սեպտեմբերի 8-ի որոշմամբ, գործի ենթակայությունը որոշելու նպատակով, այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի սեպտեմբերի 13-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասին, 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածին, 81-րդ հոդվածին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին կետին, ՀՀ Կառավարության 2002 թվականի մարտի 2-ի՝ «Նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչին որակավորման վկայական տալու կարգը հաստատելու մասին» թիվ 193 որոշման 1-ին, 4-րդ, 5-րդ, 9-րդ, 11-րդ, 13-րդ և 17-րդ կետերին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԴ/0477/05/15 գործով 2016 թվականի սեպտեմբերի 28-ին և թիվ ՎԴ/1621/05/14 գործով 2016 թվականի ապրիլի 22-ին կայացված որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումներին, ՀՀ վարչական դատարանը, 2023 թվականի օգոստոսի 24-ի որոշմամբ, հայցադիմումը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ

պատճառաբանությամբ. *«(…) ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվող թարգմանչի որակավորման ստուգումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից ստեղծված հանձնաժողովը, որը վարչական մարմին չէ և որին վարչական ակտ ընդունելու լիազորություն վերապահված չէ:*

Տվյալ դեպքում հայցվորը, ըստ էության, համաձայն չէ 2022թ. նոյեմբերի 17-ին կայացած՝ նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի որակավորման ստուգման արդյունքների հետ (անկախ իր կողմից ներկայացված հայցի առարկայից), որպիսի ստուգման աշխատանքները կազմակերպում է Հանձնաժողովը, իսկ ստուգման արդյունքները գնահատում է փորձագետը, հետևաբար այդ պայմաններում վեճը հանդիսանում է մասնավոր հարաբերությունների շրջանակում ծագած, ուստի հայցն ընդդատյա չէ Դատարանի քննությանը, քանի որ իրավահարաբերությունը չի համապատասխանում հանրային իրավահարաբերությունների հատկանիշներին»[1]:

6. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին և 3-րդ հոդվածներին, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին կետին, ՀՀ Կառավարության 2002 թվականի մարտի 2-ի՝ «Նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչին որակավորման վկայական տալու կարգը հաստատելու մասին» թիվ 193 որոշման 1-ին, 4-րդ, 5-րդ, 9-րդ, 11-րդ, 13-րդ և 17-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումներին, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2023 թվականի սեպտեմբերի 8-ի որոշմամբ գտել է, որ *«(…) [Վ]եճի առարկա է հանդիսանում թարգմանչի որակավորման իրավահարաբերությունը, որի մի կողմում հանդես է գալիս որակավորման ենթակա անձը՝ ի դեմս սույն գործով հայցվորի, մյուս կողմում՝ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը՝ ՀՀ արդարադատության նախարարությունը՝ ի դեմս որակավորման հանձնաժողովի, որպիսի պարագայում խոսք չի կարող լինել կողմերի իրավաբանական հավասարության վրա և կամքի ինքնավարության վրա հիմնված իրավահարաբերությունների մասին, որոնք մասնավոր՝ քաղաքացիաիրավական փիրույթը որոշող առանցքային սկզբունքներ են»*[2]:

---

[1] Տե՛ս դատական գործը, թերթեր 97-99:
[2] Տե՛ս դատական գործը, թերթեր 109-113:

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

7. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/6460/05/23 գործն ըստ հայցի՝ Մայա Ալեքսանյանի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության՝ 2022 թվականի նոյեմբերի 17-ին կայացած՝ ՀՀ ԱՆ նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի որակավորման ստուգման արդյունքում ՀՀ արդարադատության նախարարի կողմից ստեղծված հանձնաժողովի կայացրած՝ 2022 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 3 արձանագրությունը հայցվորի մասով վերացնելու, որպես հետևանք՝ ՀՀ արդարադատության նախարարության գլխավոր քարտուղարի՝ 2023 թվականի փետրվարի 15-ի թիվ /17.0.1/7898-2023 գրությունը վերացնելու պահանջների մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:*

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝ վարչական դատարանը, (...)»:*

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի:*

2. Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի (...)»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...)»:*

Նույն օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության»:*

9. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* վարչական գործով կայացված թիվ ՎԴ/0830/05/14 որոշման շրջանակներում՝ արձանագրելով հետևյալը. *«(...) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձիք, այդ թվում պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: (...) [Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման*

կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (...)»[3]:

10. ՀՀ Վճռաբեկ դատարանը մեկ այլ՝ *Գոռիշիան Իշիկյանն ընդդեմ ««ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ Կառավարության առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հռիփսիմե Իշիկյանի* քաղաքացիական գործով կայացված թիվ ԵՄԴ/1029/02/14 որոշմամբ արձանագրել է. *«[Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.*

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՝ ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՝ ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՝ ոչ:

Միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը՝ հաշվի առնելով նաև այն կարևոր հանգամանքը, որ հանրային հարաբերություններից բխող բոլոր վեճերը չեն, որ վերապահված են վարչական դատարանի քննությանը, քանի որ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական

---

[3] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* թիվ ՎԴ/0830/05/14 վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի որոշումը:

դատարանի (...) ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը»[4]*:*

11. «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *«Նոտարական գործողությունների ժամանակ որպես թարգմանիչ կարող է հանդես գալ համապատասխան լեզվի տիրապետման մասին որակավորման վկայական ունեցող այն անձը, որին վստահում է նոտարը, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի: Օտար լեզվով գործարքը վավերացնելիս կամ հայերենին չտիրապետող կողմին պարզաբանումներ տալու համար թարգմանչի ընտրությունը համաձայնեցվում է կողմերի հետ: Որակավորման վկայականներ տալու կարգը հաստատում է կառավարությունը: Որակավորման վկայականի ձևը սահմանում է արդարադատության նախարարը: (...)»:*

12. ՀՀ Կառավարության 2002 թվականի մարտի 2-ի՝ «Նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչին որակավորման վկայական տալու կարգը հաստատելու մասին» թիվ 193 որոշմամբ հաստատվել է նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչին որակավորման վկայական տալու կարգը (այսուհետ՝ նաև Կարգ)՝ համաձայն «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին կետի:

Կարգի 1-ին կետի համաձայն՝ *«Նոտարական գործողությունների կատարման ժամանակ հայերենին չտիրապետող անձանց սպասարկել, ինչպես նաև փաստաթղթերի՝ հայերենից օտար լեզվով կամ օտար լեզվից հայերեն թարգմանություն իրականացնել ցանկացող անձանց թարգմանչի որակավորման վկայականները (այսուհետև՝ վկայական) տրվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության (այսուհետև՝ նախարարություն) կողմից իրականացվող թարգմանչի որակավորման ստուգում (այսուհետև՝ ստուգում) անցնելուց հետո»:*

---

[4] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գոռիշխան Իշիկյանն ընդդեմ ««ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հոիփսիմե Իշիկյանի* թիվ ԵՄԴ/1029/02/14 քաղաքացիական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի որոշումը:

Նույն Կարգի 4-րդ կետի համաձայն՝ *«Ստուգումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի (այսուհետև՝ նախարար) կողմից ստեղծված հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով)»:*

Նշված Կարգի 5-րդ կետի համաձայն՝ *« Հանձնաժողովը՝*

ա) կազմակերպում է դիմողների ստուգման աշխատանքները.

բ) ընտրում է թարգմանության համար նախատեսվող տեքստերը, որոնք ենթակա չեն հրապարակման.

գ) որոշում է ստուգման վայրը, ժամանակը և դրա մասին հայտնում դիմողներին.

դ) կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքները և կարգավորում ստուգող ու բողոքարկման հանձնաժողովների գործունեությանն առնչվող հարցերը.

ե) քննում է դիմողների բողոքները՝ կապված ստուգման կազմակերպման հետ.

զ) ընդունում է ստուգման կազմակերպման հետ կապված այլ որոշումներ.

է) իրականացնում է սույն կարգով սահմանված այլ լիազորություններ»:

Կարգի 9-րդ կետի համաձայն՝ *«Դիմողի գիտելիքների ստուգման նպատակով նրան թարգմանության համար տրվում են հայերեն և համապատասխան օտար լեզուներով տեքստեր: Դիմողն իրավունք ունի թարգմանությունները կատարելիս օգտվելու բառարաններից և համակարգչային տեխնիկայից՝ առանց համացանցից օգտվելու հնարավորության»:*

Նույն Կարգի 11-րդ կետի համաձայն՝ *«Թարգմանությունների ճշտությունն ստուգում են նախարարության «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից առաջադրված՝ համապատասխան լեզվին տիրապետելու մասին փաստաթուղթ ունեցող մասնագետների ցանկից հանձնաժողովի կողմից ընտրված փորձագետները: (…)»:*

Նշված Կարգի 13-րդ կետի համաձայն՝ *«Ստուգման արդյունքները գնահատում է փորձագետը: Ստուգման արդյունքները գնահատվում են 20 միավոր համակարգով: Դրական են համարվում 17 և բարձր միավորները»:*

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ *«Ստուգման արդյունքները կարող են բողոքարկման հանձնաժողով բողոքարկվել ստուգման արդյունքների ստացումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում»:*

13. Վերը նշված իրավական նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ նոտարական գործողությունների ժամանակ որպես թարգմանիչ կարող է հանդես գալ միայն այն անձը, որն ունի համապատասխան լեզվի տիրապետման մասին որակավորման վկայական: Որակավորման վկայական տալու կարգը հաստատվել է ՀՀ Կառավարության 2002 թվականի մարտի 2-ի՝ «Նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչին որակավորման վկայական տալու կարգը հաստատելու մասին» թիվ 193 որոշմամբ: Նույն Կարգի համաձայն՝ նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչին որակավորման վկայական տրվում է ՀՀ արդարադատության նախարարության կողմից՝ թարգմանչի որակավորման ստուգումից հետո, որի իրականացումը վերապահված է ՀՀ արդարադատության նախարարի կողմից ստեղծված հանձնաժողովի իրավասությանը:

Վերոգրյալը վկայում է այն մասին, որ նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչին որակավորման վկայական տալու իրավահարաբերության կողմ հանդիսացող հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը՝ ՀՀ արդարադատության նախարարությունն է: Այլ կերպ ասած՝ ՀՀ արդարադատության նախարարությունն իր վրա դրված նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչին որակավորման վկայական տալու հանրային իշխանական լիազորությունն իրացնում է՝ իր իսկ կողմից ստեղծված հանձնաժողովի միջոցով:

Ուստի սույն գործով վեճը ծագում է այնպիսի իրավահարաբերությունից, որի բովանդակությունը հանգում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչին որակավորման վկայական տալու իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությանը, իսկ քննության ենթակա հիմնական պահանջի հիմքում ընկած վիճելի իրավահարաբերությունն ուղղված է հանրային շահի ապահովմանը:

14. Սույն վարչական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Մայա Ալեքսանյանը 2023 թվականի օգոստոսի 18-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության՝ 2022 թվականի նոյեմբերի 17-ին կայացած՝ ՀՀ ԱՆ նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի որակավորման ստուգման արդյունքում ՀՀ արդարադատության

նախարարի կողմից ստեղծված հանձնաժողովի կայացրած՝ 2022 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 3 արձանագրությունը հայցվորի մասով վերացնելու, որպես հետևանք՝ ՀՀ արդարադատության նախարարության գլխավոր քարտուղարի՝ 2023 թվականի փետրվարի 15-ի թիվ /17.0.1/7898-2023 գրությունը վերացնելու պահանջների մասին [5],

- ՀՀ վարչական դատարանը, 2023 թվականի օգոստոսի 24-ի որոշմամբ, հայցադիմումը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվող՝ թարգմանչի որակավորման ստուգումն իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարի կողմից ստեղծված հանձնաժողովը, որը վարչական մարմին չէ և որին վարչական ակտ ընդունելու լիազորություն վերապահված չէ, ուստի հայցվորի պահանջն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին[6],

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, համապատասխան նորմերի վերլուծության արդյունքում, եզրահանգել է, որ սույն հայցի հիմքում ընկած իրավահարաբերությունը քաղաքացիաիրավական չէ, քանի որ մի կողմում հանդես է գալիս որակավորման ենթակա անձը՝ ի դեմս սույն գործով հայցվորի, մյուս կողմում՝ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը՝ ՀՀ արդարադատության նախարարությունը՝ ի դեմս Որակավորման հանձնաժողովի[7]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-13-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ տվյալ դեպքում Մայա Ալեքսանյանի և ՀՀ արդարադատության նախարարության միջև ծագած վեճը վերաբերում է ՀՀ արդարադատության նախարարի կողմից ստեղծված հանձնաժողովի կողմից նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի որակավորման ստուգման արդյունքները վիճարկելուն, որպիսի իրավական վեճը բխում է ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավահարաբերություններից:

---

[5] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[6] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

16. Վերը շարադրվածը հիմք է տալիս փաստելու, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/6460/05/23 գործն ըստ հայցի՝ Մայա Ալեքսանյանի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության՝ 2022 թվականի նոյեմբերի 17-ին կայացած՝ ՀՀ ԱՆ նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի որակավորման ստուգման արդյունքում ՀՀ արդարադատության նախարարի կողմից ստեղծված հանձնաժողովի կայացրած՝ 2022 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 3 արձանագրությունը հայցվորի մասով վերացնելու, որպես հետևանք՝ ՀՀ արդարադատության նախարարության գլխավոր քարտուղարի՝ 2023 թվականի փետրվարի 15-ի թիվ /17.0.1/7898-2023 գրությունը վերացնելու պահանջների մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, հիմնավոր է:

17. Վերոգրյալի հիման վրա, գտնում եմ, որ Մայա Ալեքսանյանի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/6460/05/23 գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ՎԴ/6460/05/23 գործն ըստ հայցի՝ Մայա Ալեքսանյանի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության՝ 2022 թվականի նոյեմբերի 17-ին կայացած՝ ՀՀ ԱՆ նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի որակավորման ստուգման արդյունքում ՀՀ արդարադատության նախարարի կողմից ստեղծված հանձնաժողովի կայացրած՝ 2022 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 3 արձանագրությունը հայցվորի մասով վերացնելու, որպես հետևանք՝ ՀՀ արդարադատության նախարարության գլխավոր քարտուղարի՝ 2023 թվականի փետրվարի 15-ի թիվ /17.0.1/7898-2023 գրությունը վերացնելու պահանջների մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ